ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆ ՄԸ

Հ. Սմբատեան մեծարգոյ խմբագրութեան:

Թերթիդ 3-րդ համարի 96 էջումՍ հայկական ճարտարապետութեան առթիւ գրուած նկատողութեան մէջ մի սխալ է մտել. որ խնդրում եմ ուղղել: "Փ. Տէր-Մովսէսեան իւր "Հայ գիւղական տուն„ գործին մէջ հին հայոց տան հին արեւելքի հետ ունեցած կապակցութիւնը կը ցուցնէ իսկ եկեղեցիներուն նկատմամբ աւելի մտեալ է բոլորովին յունական ազդեցութիւնն ընդունելու. սակայն պէտք է միտ դնել թէ այն յունական ազդեցութիւնը Կապադովկիայէն էր, եւ պրոֆ. Ծարգոյովսկիի "Kleinasien„ մատենին մէջ կարդալ թէ այն յունականութիւն է:„ Ջուարթնոց կամ Ս. Գրիգորի եկեղեցու ճարտարապետութեան մասին մեր յայտնած կարծիքն այս է "վերջապէս„ ասուած է մեր աշխատութեան եզրակացութեան մէջ՝, "Ներսէսի եկեղեցու շինութեան ճարտարապետութեան մասին մեր յարուցած հարցը կարող է իւր լուծումն ստանալ մի միայն կախուած իրերի ընդհանուր պարզաբանութիւնից: Ցուն արէն եւ հայերէն արձանագրութիւնները, ամբողջ շինութեան ոճը, օրնամենտները եւ վկայում են թէ յոգուտ հայկական եւ թէ յոգուտ Բիւզանդական աւելի շատ ասորական ծագման: Ուստի ամենաուղիղն է եզրակացնել որ եթէ շինութեան վրայ աշխատել են նաեւ զրսից հրաւիրեալ վարպետներ, այնուամենայնիւ հայաստանում նոքա ունեցել են համահնչաւոր ընկերներ որ արուեստի մէջ երենցից յետամնաց չէին: Այս տողերը կարդացողը չի կարող հաստատել, որ ես "միտեալ իմ բոլորովին յունական ազդեցութիւնն ընդունելու:„ ՄԵՍՐՈԲ ՎԱՐԴԱՊԵՏ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

1. ՎԱՐՍԱԳՆԻՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ. — Գրեց՝ Ռուս պատմաբան Վ. Պօտտօ: Ռուսերէնից թարգմանեց՝ Պ. Պ. (Արտատպ. "Բանասէր„ հանդիսից): Պարիս 1904. Գինն է՝ 10 կոպէկ = 25 սանտիմ. 8° էջ 32:
2. ԱՐԹՐՈՒՆԻ ԹԾ. Վ. — Ծաղիկ եւ պատուաստ: Ցեմ. "Հերմէս„ 1904: [Թժշկի զրոյցներ թ. 11:]
3. Ցեղեկագիր Հոգաբարձութեան Նէշտի Գուլէի Հայոց Հիւանդանոցի (Ս. Փրկիչ) 1903 Յունուար 7էն — 1903 Յունուար 7:
4. ՆՈՐԴԻՆՈ ՄԱՅՍ. – Հայրենասէր Իտալացին: Գերմ.՝ թրգմ. Լ. Բաբայեան: Թէհրան, տպ. "Փարոս„ 1904:
5. ԵՐԳԵՐ, ԱՌԱՍՆԵՐ, ՀԱՆԵԼՈՒԱԾՆԵՐ ԵՒՆ ԽՈՏՈՐՈՒՐՈՑ հատաւոց Հ. Մ. Հ. Գաւառացի: Տփ. տպ. Ցավարտկիլաժէ 1904. 8՝ էջ 134: Գին 50կ.:
6. Մ. ԱՌԾԻՄԻՆԵՆ. Կոյր Բաքին, քերթուած: Բաքու 1904:
7. ԹՈՐՈՍԵԱՆ Զ. — Դպրոցի գիրքը Մանկապարտէզի համար. առաջին մաս այբենարան: Բառեր եւ կարճ խօսքեր. զարդարուած ձոխ պատկերներով: Կ. Պ. 1904: — — Նոյնին երկրորդ մասը՝ ընտիր ընթերցանութեան՝ բազատարուած եւ ձոխ պատկերներով զարդարուած: Անդ:

1. Վերջաբանութիւն Հայոց գրոց: — Գրքոյկս հիւսիսային Հայաստանի ԺԸ դարու սկզբան մինչեւ ԺԹ դարու մէջերը կրած քաղաքական բազմադիմի փոփոխութեանց եւ զանազան ազգաց ու միապետաց հզօր բազկին տակ ընդունած ազդեցութեանց համառօտ պատմութիւն է, ծանրանալով գլխաւորաբար Պարսկահայոց գաղթականութեան, Ռուսական ահեղ բանակներու Հայաստան մտնելուն եւ Ներսէս Ե. Աշտարակեցւոյն գործունեայ կենաց վրայ: Հեղինակը հակիրճ կերպով Հայոց պլսագիներէն կրած նեղութեանց վրայ տեսութիւն մ՝ընելով կ՝անդրադառնայ ռուսաց սերբութեան հետ ունեցած յարաբերութեան: Հայաստան այն ինչ Շահաբասեան հալածանքներէն խուճչած՝ հանգիստ ու գաղար կ՝առնուր, երբ նեղութիւնք դարձեալ սկսան ծանրանալ, տարպուեցաւ իւր փրկութեան յոյսը՝ միայն հիւսիսային նորակազմ քրիստոնեայ պետութեան վրայ գնել. ասուելիք ալ հիւսիսէն պիտի ծագեր Հայաստանի ազատութեան արշալոյսը: որուն ուղղուած էին ամէն հայու աչքեր Մեծն Պետրոս երբ Ռուսական պետութեան հիմը գրած էր եւ իւր շքեղ հայրենասիրութեամբն ամբողջ երկիրը զարթացներելու հետամուտ էր, աչքէն չվրիպեցաւ նաեւ ասուելիք հայ ազգը, որ իւր սրտաբոյր կարգի մէջ գործունեութեամբը կարող էր տերութեան յառաջադիմութեանը մեծապէս նպաստել, եւ իւր այս ճանաչմամբը Հայոց հետ սկսաւ սերտ կապակցութեամբ թղթակցել եւ Հայք ալ պատգամաւորութիւններով օգնութիւն կը խնդրէին եւ միանգամայն կը խոստանային, որ առաջին վայրկենին երբ ինքը Հայաստան տաք կոխէ՝ թէ իրենք եւ թէ Ազգայիք իրենց քաջարի գնդերով պատերազմին կը նպաստեն: Հոս կը նկարագրէ Պաթաբաղի կաշէրուան եւ բմբիշ Մելիքներուն՝ Ցաշկաց, Պարսից եւ լեռնական Լեզգի հրամանները դէմ բրած սարսափելի պատերազմները: Ցեռայ Ջերմ գրածմամբ կը նկարէ Ցիրքանով եւ Գուռգովիչ զորավարաց՝ Գանձակի եւ Երիւանի դէմ մղած ճակատները, որոնց մէջ Յովհաննէս Արքեպիսկոպոսը եւ Ներսէս Վարդապետը (յետոյ կաթողիկոս) հայ զինուորախումբի մը գլուխն անցած կ՝առաջնորդէին: Քիչ մ՝եռքը կը պատմէ Դանիէլ Պարտիարքին եւ Ներսիսին պատարագիչ ու ազատիչը եւ կաթուղիկոսական գահուն համար եղած կնճռոտ կռիւներն ու վէճերն: Ներսէս՝ Արքեպիսկոպոս բլլալէն եռքը, մեծ ազդեցութիւն կը գործադրէ, ոչ միայն Ռուսահայոց, այլ նաեւ Ցաշկահայոց եւ Պարսկահայոց — — եւ նոյն իսկ Ռուսական բանակներու պատկներու հետ ալ շարժելու վրայ. եւ այս պատմաւոր Պարսիչիչի հետ կը գտնի: Վերջապէս Պարսկահայոց դժուարին գաղթականութիւնը կը պատմէ Լազարեանի ձեռքով, որուն դէմ մեծ արգելքներ հանեց Աբբաս Միրզան՝ բայց ի վերջոյ չկրցաւ դէմ դնել Լազարեանի, տեսնելով գաղթել ուզող ժողովրդեան հրաբորբոք ասելութիւնն ընդդէմ Պարսից ու լսելով, այն խօսքը, զոր միաձայն միաբերան կ՝ազազակէին թէ՝ "ինքնակամ գերեզման են համարում ասել Ռուսի խոսք, քան Պարսից հացը„: Գաղթականութեան ամենամեծ եւ առաջին բաժինը Ճամբայ ելաւ 1828 Մարտ 16ին: Հաղթ-

[3] Рассказъ Разсвѣтъ Церкви Св. Григорія Просвѣтителя, С.-П. 1903. էջ 48.

digitised by A.R.A.R.@